ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ/Հ	Առաջարկի անվանումը	Առաջարկի բովանդակությունը (ներառյալ բյուջեն)	Առաջարկի կարգավիճակը • *Ընդունվել է* • *Մերժվել է*	Մերժման դեպքում՝ հիմնավորումը
1.	Արծվանիստ բնակավայրի Կասագոր կոչվող տարածքում առկա ոռոգման ցանցի թվով 7 մարիչ հորերի կառուցում	Բնակավայրի 40□-ը՝ շուրջ 100 հա, ոռոգվում է Կասագոր կոչվող տարածքից, սակայն նշված տարածքում ոռոգման առուն անցնում է թեքությամբ և ջրի մեծ արագության պատճառով շիթը հարվածում է անկյունային հորերի թեքման հատվածներին և թափվում է վաքերից: Ծրագրով նախատեսվում է իրականացնել 7 մարիչ հորերի կառուցում, որը հնարավորություն կտա խնդրի վերացմանը: **Ֆինանսական միջոցներ նշված է՝ 750 000 ՀՀ դրամ**	Ընդունվել է	—
2.	Ն.Գետաշեն բնակավայրի մշակույթի կենտրոնի դահլիճի վերանորոգում	Դահլիճը նախատեսված է 350 անձանց համար, ընդհանուր մակերեսը կազմում է 400քմ: Բնակավայրի բնակիչները զրկված են մշակութային միջոցառումներին մասնակցության հնարավորությունից: Դահլիճի վերանորոգումից հետո բնակիչներին հնարավորություն կտրվի ունենալ ակտիվ մշակութային կյանք,մասնացել մի շարք միջոցառումների: **Ֆինանսական միջոցներ՝ նշված է համայնքի բյուջե , ակտիվ երիտասարդների խումբ և բարերարներ:**	Ընդունվել է	—

3.	Աստղաձոր բնակավայրի մշակույթի կենտրոնի սպորտդահլիճի կոսմետիկ վերանորոգում և կահավորում	Աստղաձոր գյուղի բնակիչները և երեխաները զրկված են սպորտային դասերին մասնակցելու հնարավորությունից՝ սպորտդահլիճի անմխիթար վիճակից ելնելով: Դահլիճի վերանորոգումից հետո գյուղի երեխաներին հնարավորություն կտրվի մասնակցելու սպորտային պարապմունքների և միջոցառումների,հնարավորություն կտրվի համայնքում զարգացնել սպորտը, խթանել առողջ ապրելակերպը: **Ֆինանսական միջոցներ՝ նշված է համայնքի բյուջե:**	Ընդունվել է	—
4.	Մարտունի քաղաքի Մյասնիկյան 1-ին փակուղում ոռոգման առվի կառուցում	Ծրագրով նախատեսվում է կառուցել վերը նշված փողոցի ոռոգման առուն, որը հնարավորություն կտա 7 տնային տնտեսությունների ոռոգելու իրենց տնամերձ հողամասերը, ինչպես նաև ճանապարհ դարձնել անվտանգ և հարմարավետ: **Ֆինանսական միջոցներ՝ նշվել է մոտավորապես 8 000 000 ՀՀ դրամ**	Ընդունվել է	—
5.	Գեղհովիտի վարչական շենքի առաջին հարկի դահլիճի և սանհանգույցի կոսմետիկ վերանորոգում և կահավորում	Վարչական շենքի առաջին հարկի կոսմետիկ վերանորոգում, որը իր մեջ ներառում է բազմաֆունկցիոնալ դահլիճի կոսմետիկ վերանորոգում և կահավորում, ինչպես նաև առաջին հարկում գտնվող սանհանգույցի վերանորոգում: **Ֆինանսական միջոցներ՝ նշվել է 7 700 000-11 100 000 ՀՀ դրամ**	Ընդունվել է	—
6.	Գեղհովիտի բոնցքամարտի	Նախագիծը նպատակ ունի վերանորոգել Գեղհովիտի մշակույթի կենտրոնում գտնվող	Ընդունվել է	—

	մարզասրահի կոսմետիկ վերանորոգում և մարզագույքով կահավորում	սենյակներից մեկը՝ այն դարձնելով լիարժեք մարզասրահ: **Ֆինանսական միջոցներ՝ նշվել է 8 100 000-12 500 000 ՀՀ դրամ**		
7.	Համայնքի Ծովինար բնակավայրի դաշտամիջյան ճանապարհների հիմնանորոգում	Առաջարկվում է հիմնանորոգել Ծովինար բնակավայրի դաշտամիջյան ճանապարհները՝ մ 17000 մ երկարությամբ, որը առաջնահերթ է գյուղատնտեսական ոլորտի աշխատանքների անխոչընդոտ իրականացման համար: **Ֆինանսական միջոցներ՝ նշվել է 18 000 000 ՀՀ դրամ**	Մերժվել է	Առաջարկը նոր առաջարկ չէ, քանզի նախատեսված է իրականացնել համայնքի այլ ծրագրերի շրջանակներում:
8.	Լեռնակերտի դաշտամիջյան ճանապարհի վերանորոգում «Արգիճի» կոչվող խոտհարք	Առաջարկվում է վերանորոգել Լեռնակերտի դաշտամիջյան մոտ 15 կմ երկարությամբ ճանապարհը, որը օգնում է հասնել «Արգիճի» խոտհարքներին և առաջնահերթ է գյուղատնտեսական ոլորտի աշխատանքների անխոչընդոտ իրականացման համար: **Ֆինանսական միջոցներ՝ նշվել է 20 000 000 ՀՀ դրամ**	Մերժվել է	Առաջարկը նոր առաջարկ չէ, քանզի նախատեսված է իրականացնել համայնքի այլ ծրագրերի շրջանակներում: